**ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՕԴՈՐԱԿԻՉՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ,ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ և ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N *ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/43***

ք. Արտաշատ «01» ապրիլ 2026թ.

«***Արտաշատի համայնքապետարան***», ի դեմս համայնքի ղեկավար Կ. Մկրտչյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԵՂԻԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԺՈՐԱՅԻ» ԱՁ-ն (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***Արտաշատի համայնքապետարանի և Արտաշատ համայնքի բնակավայրերի վարչական շենքերի օդորակիչների տեխնիկական սպասարկման, վերանորոգման և պահպանման ծառայությունների*** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ***3 540 480 (երեք միլիոն հինգ հարյուր քառասուն հազար չորս հարյուր ութսուն)*** ՀՀ դրամ

4.1.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության միավորի առավելագույն գինը կազմում է ***179 000 (մեկ հարյուր յոթանասունինը հազար)*** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի *25-ը:*

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի  կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան  պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

Արտաշատի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ,
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 04240737
Հ/Հ՝ 900412201023
Համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

____________________________
(ստորագրություն)

Կ.S.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«ԵՂԻԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԺՈՐԱՅԻ» ԱՁ
Հասցե՝ ք. Երևան, Մալաթիա Սեբաստիա, Անդրանիկի 105շ, բն 44
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570025776237700
ՀՎՀՀ 28084162

____________________________
(ստորագրություն)

Կ.S.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*« 01 » ապրիլ 2026թ. կնքված*
*ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/43 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը** |
| 1 | 50711100/1 | | դրամ | 3 540 480 | 1 | Ք. Արտաշատ Օգոստոսի 23/62՝ ծավալաթերթ 1 և Արտաշատ համայնքի բնակավայրեր ըստ ծավալաթերթ 2-ի | Կողմերի միջև պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2026թ. |
| ***մեկ միավորի առավելագույն գին*** | | | | ***179 000*** | | | |

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Անհրաժեշտ է իրականացնել Արտաշատի համայնքապետարանի և Արտաշատ համայնքի բնակավայրերի վարչական շենքերի օդորակիչների վերանորոգման,սպասարկման և պահպանման ծառայություններ: Օդորակիչների վերանորոգումը, պահպանումը և սպասարկումը իրականացվում է ըստ ստորև ներկայացված առանձին տեսակների՝ Արտաշատի համայնքապետարանի վարչական շենքի օդորակիչների ցանկ՝ տես.՝ ծավալաթերթ 1, Արտաշատ համայնքի բնակավայրերի վարչական շենքերի օդորակիչների ցանկ տես.՝ ծավալաթերթ 2: Ծառայության կատարման գնացուցակը տես.՝ ծավալաթերթ-գնացուցակ աղյուսակում: Կատարողը պետք է Պատվիրատուի պահանջի դեպքում 2 օրվա ընթացքում բացահայտի առկա անսարքությունը,խափանումը կամ այլ թերությունները և 3 օրվա ընթացքում կատարի համապատասխան գործողություններ թերությունների վերացման նպատակով:

**Նշված նախահաշվային գինը (3 540 480 ՀՀ դրամ) առավելագույնն է պատվիրատուն ծառայությունների դիմաց կկատարի վճարում ըստ մատուցված ծառայությունների արժեքի: Մասնակցի կողմից ներկայացվող գնային առաջարկը օդորոկիչների պահեստամասերի, նյութերի փոխարինման կամ վերանորոգման ծառայությունների մեկ միավորի գների հանրագումարն է:**

Կատարողը պարտավոր է օգտագործել տվյալ օդորակիչի արտադրող ընկերության կողմից արտադրված կամ նրա կողմից երաշխավորված պահեստամասեր և նյութեր: Օգտագործվող պահեստամասերն ու նյութերը պետք է լինեն որակով,նոր, չօգտագործված համապատասխան տվյալ օդորակիչի ֆիրմային:

Պայմանագիրը կողմերի միջև ուժի մեջ մտնելուց հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում կատարողը պարտավոր է ներկայացնել հաշվետվություն ՝

1.Աղյուսակ թիվ 1 -ով ներկայացված կաթսաների վիճակի ուսումնասիրություն և գնահատում: Որով կորոշվի կաթսաների տեխնիկական վիճակը, դրանց հետագա շահագործման համար մատուցվելիք ծառայությունները, ինչպես նաև տնտեսական հաշվարկ կաթսաների վերանորոգման կամ նորով փոխարինման անհրաժեշտության մասին:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Ծավալաթերթ 1

| Արտաշատի համայնքապետարանի վարչական շենքի օդորակիչներ | |
|---|---|
| 1 | 1.Օդորակիչ $30^2$ ընդհանուր 9 հատ HISENSE, AST-09UW4SVETG1 1 WIFI. |
| 2 | 2. Օդորակիչ $40^2$ ընդհանուր 9 հատ HISENSE, ST-12UW4SVETG15 WIFI |
| 3 | 3. Օդորակիչ $60^2$ ընդհանուր 4 հատ HISENSE, AST-18UW4SXATG0 7B WIFI |
| 4 | 4. Օդորակիչ $80^2$ ընդհանուր 1 հատ HISENSE, AST-24UW4RBTCA0 2A WIFI |
| 5 | 5. Օդորակիչ $120^2$ ընդհանուր 9 հատ HISENSE, AS-36HR4SDKVQ (WHITE) |

Ծավալաթերթ 2 բնակավայրերի վարչական շենքերի օդորակիչներ

| | | |
|---|---|---|
| 1 | Աբովյան համայնք | 1 հատTCL 60քմ_18000BTU և 1 հատ AKAI 80քմ-24000BTU |
| 2 | Ազատավանհամայնք | 2 Հատ, ապրանքանիշը՝BEKO, 40քմ_12000BTU |
| 3 | Բյուրավան համայնք | 1հատ HISENSE 30ՔՄ՝ 9000BTU |
| 4 | Բուրաստան համայնք | 1 հատ -40քմ՝ 12000BTU , 2 հատ -30քմ՝ 9000BTU, - BALLU |
| 5 | Դալար համայնք | 1 հատ, <<Հիտաչի>> ME 14 HZ 40 քմ՝ 12000BTU, 1 հատ Super Jeneral 30քմ՝ 9000BTU |
| 6 | Դիմիտրով համայնք | 2 հատ, ապրանքանիշը՝ MDV, 60քմ՝ 18000BTU |
| 7 | Լանջազատ համայնք | Մշակույթի տուն՝ 1 հատ,ապրանքանիշը ՏՑL40քմ-ի համար՝12000BTU |
| 8 | Կանաչուտ համայնք | 1 օդորակիչ, BERG, 30 քմ-՝ 9000BTU |
| 9 | Հնաբերդ համայնք | 2 օդորակիչ, 30քմ՝ 9000BTU և 60 քմ- 18000BTU, VIKASS |
| 10 | Հովտաշեն համայնք | 2 հատ օդորակիչ , 40 ք/մ՝ 12000BTU, Hisense |
| 11 | Մասիս համայնք | 1 հատ օդորակիչ, ՝AUKIA 30քմ՝ 9000BTU, 1 հատ VS 60քմ՝ 18000BTU,1 հատ ROYAL 40քմ՝ 12000BTU |
| 12 | Մխչյան համայնք | 5 հատ, ապրանքանիշը՝ ,,BEKO,, 20քմ՝ 7000BTU, 60 քմ- ՝18000BTU |
| 13 | Մրգավան համայնք | 1 հատ, ապրանքանիշը՝ BERG, ՝ 9000BTU |
| 14 | Մրգավետ համայնք | 2 հատ, ապրանքանիշը՝ MDV, 30քմ՝ 9000BTU, 1 հատ՝ Hisense, 60քմ՝18000BTU |
| 15 | Նարեկ համայնք | 2օդորակիչ, 60qm՝ 18000BTU և 80 քմ՝ 24000BTU, ապրանքանիշ՝ Hisense |
| 16 | Նորաշեն | 1 հատBERG / 40 քմ -՝ 12000BTU,1 հատ NDV 25 քմ - 12000BTU |
| 17 | Շահումյան համայնք | 1 հատ, ՝ DANTEX, 60քմ-՝ 18000BTU |
| 18 | Ոստան համայնք | 1 հատ Միցուբիշի /110 քմ/ ՝ 36000BTU/ |
| 19 | Վարդաշեն համայնք | 1 հատ TCL /IN/ERTER /, 80 քմ՝ 24000BTU |
| 20 | Վ. Արտաշատ համայնք | 2հատ SATURN 20քմ՝ 7000BTU, 1 հատ HISENSE 20քմ՝ 7000BTU, 1 հատ HORDLINE 20քմ, 1 հատ VESTEL 40քմ1 12000BTU, 1 Հատ CHOGO տ 20քմ՝ 7000BTU,1 հատ ELECTROLUX 60qm՝ 18000BTU |
| 21 | Քաղցրաշեն համայնք | 1 հատ- 60քմ՝ 18000BTU, ՝ MEGA, |

Ծավալաթերթ-գնացուցակ

| Հ/Հ | ԱՆՎԱՆՈՒՄ | ՉԱՓԻ ՄԻԱՎՈՐ | ՄԵԿ ՄԻԱՎՈՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳԻՆ |
|---|---|---|---|
| 1 | Ժայլուգի փոխարինում, ներառյալ ապրանքը | հատ | 9300 |
| 2 | ապամոնտաժում | հատ | 14000 |
| 3 | մոնտաժում | հատ | 23750 |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | 33 մետր ավտոկռունկով փոխարինում /վերանորոգում | ժամ | 20000 |
| 5 | 20 մետր ավտոկռունկով փոխարինում /վերանորոգում | ժամ | 30000 |
| 6 | Խողովակ պղնձի իր լրակազմով | լրակազմ | 7400 |
| 7 | Գազի լիցքավորում | կգ | 9500 |
| 8 | խողովակի Զոդում | հատ | 4700 |
| 12 | Կոմպրեսորի փոխարինում | հատ | 28000 |
| 15 | Ջրահեռացման արտահոսքի խցանման վերացում | հատ | 9500 |
| 16 | Ֆիլտրների մաքրում | հատ | 4670 |
| 17 | Ֆիլտրների փոխարինում | հատ | 5600 |
| 18 | Տվիչի փոխարինում | հատ | 7000 |
| 19 | Հեռակառավարման վա-հանակի վերանորոգում | հատ | 1360 |
| 20 | Հեռակառավարման վա-հանակի վերանորոգում | հատ | 4220 |
| | **Ընդամենը** ***/մեկ միավորի առավելագույն գին/*** | | ***179 000*** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Արտաշատի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ,
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 04240737
Հ/Հ՝ 900412201023
Համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԵՂԻԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԺՈՐԱՅԻ» ԱՁ
Հասցե՝ ք. Երևան, Մալաթիա Սեբաստիա, Անդրանիկի 105շ, բն 44
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570025776237700
ՀՎՀՀ 28084162

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 01 » ապրիլ 2026թ. կնքված
ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/43 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50711100/1 | Արտաշատի համայնքապետարանի և Արտաշատ համայնքի բնակավայրերի վարչական շենքերի օդորակիչների տեխնիկական սպասարկման, վերանորոգման և պահպանման ծառայություններ | 0 | 0 | 3 540 480 | 3 540 480 | 3 540 480 | 3 540 480 | 3 540 480 | 3 540 480 | 3 540 480 | 3 540 480 | 3 540 480 | 3 540 480 | 3 540 480 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Արտաշատի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ,
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 04240737
Հ/Հ՝ 900412201023
Համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԵՂԻԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԺՈՐԱՅԻ» ԱՁ
Հասցե՝ ք. Երևան, Մալաթիա Սեբաստիա,
Անդրանիկի 105շ, բն 44
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570025776237700
ՀՎՀՀ 28084162

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ